

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2021 թ. ապրիլի 1-ին նախատեսված նիստը քվեակազմի բացակայության հիմքով հետաձգելու վերաբերյալ

ք. Երևան

01.04.2021 թ.

Նիստին մասնակցելու համար ներկայացել էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՀՀ վարչապետի կողմից 2020 թ. օգոստոսի 7-ի № 910-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 14-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Խորհրդի նիստը նախագահող Մ. Մալխասյանը նշեց, որ օրակարգային առաջին հարցը՝ ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանի տարեկան գործունեության հաշվետվությունը, ներառվել է՝ ելնելով նախորդ նիստին հնչած առաջարկություններից, իսկ ԵՊՀ կանոնադրության մեջ լրամշակումներ կատարելու հարցը օրակարգ է մտցվել ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանի գրության համաձայն: Ինչ վերաբերում է ԵՊՀ ռեկտորի և Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրությունների վերաբերյալ հարցերին, ապա դրանք նախատեսված են եղել դեռևս 2020 թ. հոկտեմբերի 5-ին գումարվելիք նիստում քննարկվելու համար, սակայն այդ նիստը տեղի չի ունեցել դարձյալ քվեակազմի բացակայության հիմքով: Մ. Մալխասյանը պարզաբանեց, որ, համաձայն Խորհրդի աշխատակարգի 5.2 կետի, ընդհանուր կարգով գումարված հաջորդ նիստում այդ հարցերը պետք է ներառված լինեն, իսկ նախորդ՝ հունվարի 29-ին գումարված նիստն ընդհանուր կարգով չէր հրավիրվել, հետևաբար ընտրության վերաբերյալ հարցերը ներառված չէին:

Իրենց մտահոգություններն արտահայտող ելույթներ ունեցան Խորհրդի անդամներ Արսեն Հախումյանը, Դավիթ Ափոյանը, Կառլեն Խաչատրյանը, Մենուա Սողոմոնյանը և Խաչիկ Աբաջյանը:

Առաջնորդվելով Խորհրդի աշխատակարգի 5.2 կետով՝ քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվելու է ընդհանուր կարգով: Մ. Մալխասյանը միևնույն ժամանակ նշեց, որ իրավական որևէ խոչընդոտ չկա, որ Խորհրդի անդամներին խանգարի օգտվել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, ԵՊՀ կանոնադրությամբ և Խորհրդի աշխատակարգով իրենց տրված կարևոր իրավունքից՝ առաջարկել օրակարգային հարցեր: Ի վերջո, օրակարգը հաստատում է Խորհուրդը, հետևաբար այն վերջնական տեսք է ստանալու տեղում՝ առաջիկա նիստի սկզբում:

Խորհրդի նիստը նախագահող՝

Մ. Մալխասյան

Խորհրդի նիստը քարտուղարող՝

Խ. Աբաջյան